ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

<<ԵՐԵՎԱՆԻ Վ. ՎԱՐԴԵՎԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.173 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

Երևանի Մ. Զանբազյանի անվան հ.79 հիմնական դպրոցի դասվար՝
Դինա Մելիքի Մովսիսյան

Հետազոտական աշխատանք

Թեմա՝ <<Առաջին դասարանցիների ազգային արժեքների ձևավորումը գրաճանաչության գործընթացում>>

Երևան 2022 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……
…3

Գլուխ 1: Գրավոր հմտությունների ձևավորումը…….5

Գլուխ 2: Ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը գրաճանաչության գործընթացում……
..10

Եզրակացություն……
..13

Օգտագործված գրականության ցանկ……..15

Ներածություն

Ամեն մի ժողովրդի կյանքում դաստիարակության խարիսխը, մարդկային բանականության հաստատման համար միակ ճշմարիտ ճանապարհը այնպիսի քաղաքացու ձևավորումն է, որն իր մեջ կկրի իր իսկ ազգին հարիր, իր նախնիներից ժառանգած ազգային արժեքները: Վերջիններս մարդու խմբային ինքնության բոլոր դրսևորումներում դիտարկվում են որպես «ամենահիմնարարն ու տարողունակը»: Անընդհատ վերափոխվող հասարակության պայմաններում փոխվում են անցյալի մշակութային արժեքների բովանդակության և նշանակության մասին մոտեցումներն ու նրանց փոխանցման մեթոդները: Հետևաբար նոր մոտեցումներ մշակելու խնդիր է ծագում, անհրաժեշտություն է առաջանում յուրացնելու ժամանակակից մշակութային միջավայրը ձևավորող մշակութային ժառանգության բանալիները[1]: Այս հանգամանքն ավելի է բարդացնում ազգային արժեքների պահպանության խնդիրը, որի լուծման հարցը դրված է ինչպես պետության, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու առջև:

Ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Երեխան հաճախում է դպրոց, առաջին դասարան և մանկավարժի կարևորագույն խնդիրն ու նպատակն է գրաճանաչության գործընթացում երեխայի մեջ ներարկել և ամրապնդել ազգային ու համամարդկային արժեքները:

Այսպիսով, մեր հետազոտության արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետությունում ընդունված «Կրթության օրենքով» սահմանված 6 տարեկանից ուսուցումը սկսելու որոշմամբ, վաղ ուսուցմամբ պայմանավորված ծրագրային նոր պահանջներով և գրաճանաչության կազմակերպման գործընթացի իրականացման վերոնշյալ խնդիրների՝ այսօրվա համար հույժ կարևորությամբ:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել հայոց լեզվի գրաճանաչության պատմության մեջ գոյություն ունեցող փորձն ու զարգացման ընթացքը, և վերլուծել

[1] И. К. Кучмаева, Культурное наследие. Современные проблемы, М., 1987, с.12.

դպրոցում գրաճանաչության կազմակերպման գործընթացը առաջին դասարանցիների համար ազգային և համամարդկային արժեքների ձևավորման դիտակետում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել հայոց լեզվի մեթոդիկայի պատմության՝ ինչպես արևմտահայ, այնպես էլ՝ արևելահայ հատվածում գրաճանաչության մեթոդների ընդունելի և ժխտելի կողմերը, դրանց վերաբերյալ վերլուծական մոտեցումները հայ մանկավարժության պատմության մեջ:

2. Դիտարկել դպրոցում գրաճանաչության կազմակերպման ընթացքը, բացահայտել առկա դժվարություններն ու դրանք ծնող պատճառները:

3. Ուսումնասիրել ուսումնական տարվա ավարտին 6 տարեկաններով համալրված առաջին դասարանների աշակերտների կարդալու կարողությունների և խոսքի զարգացման մակարդակները:

4. Ամփոփել ուսումնասիրությունների արդյունքում ձեռք բերած եզրահանգումները, գրաճանաչության գործընթացի և սովորողների ազգային ու համամարդկային արժեքների ձևավորման ուղղությամբ:

Գլուխ 1: Գրավոր հմտությունների ձևավորումը

Գրաճանաչության ուսուցման աշխատանքներում ինչպես իր տևողությամբ ու բարդությամբ, այնպես էլ կարևորությամբ ամենահիմնական տեղը գրավում է բուն գրուսուցման կամ այբբենական շրջանը:

Այբբենական շրջանում երեխան ճանաչում է բոլոր հնչյուններն ու դրանց տառերը, սովորում է դրանք ճիշտ արտաբերել, գրել ու կարդալ կամ հնչյունները վերածել գրերի՝ գրել, գրերը վերածել հնչյունների՝ կարդալ, ինչպես առանձին ու

անկախ վերցրած, այնպես էլ մյուս հնչյունների ու տառերի հետ ունեցած կապակցության մեջ:

Այս բարդ ու բազմակողմանի աշխատանքն ամբողջ այբբենական շրջանում նույնը չի մնում, ուսուցման տարբեր փուլերում նրա խնդիրներն ու նպատակները և դրանցով պայմանավորված նաև աշխատանքի կազմակերպման մեթոդական ձևերն ու եղանակները հետզհետե փոխվում են: Երբ երեխաները նոր են սկսում սովորել հնչյուններն ու դրանց տառերը, հիմնականում հնչյունների ու տառերի ուսուցում է կատարվում, իսկ հետագայում դրան միանում է նաև բառեր կարդալու ուսուցումը, ավելի ուշ՝ բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված բնագրերի ընթերցումը, ուղղագրական ու ուղղախոսական պարզ կանոնների յուրացումը, լեզվական ու աշխարհաճանաչողական գիտելիքների հաղորդումը, դաստիարակչական համակողմանի աշխատանքը և այլն: Այս ամենը, բնականաբար, բարդացնում ու բազմակողմանի են դարձնում գրաճանաչության ուսուցման աշխատանքը: Ըստ աշխատանքի կազմակերպման այդ առանձնահատկությունների և ուսուցման խնդիրների գրաճանաչության այբբենական շրջանը բաժանվում է երեք փուլերի:

Առաջին փուլում ուսուցանվում են գրության ու արտասանության տեսակետից ամենահեշտ ու ամենագործածական հնչյուններն ու դրանց տառերը (ա, ի, ու, տ, կ, ս, ր, ն, մ, շ, լ, պ): Այս փուլում երեխաներն էլ ավելի են վարժվում բառերի վանկային ու հնչյունային վերլուծություններ ու համադրություններ կատարելու մեջ, սովորում են բառեր կարդալ՝ կարդալու հիմքում ունենալով վանկերով կամ բառերով կարդալու սկզբունքը՝ նայած ինչ մեթոդով է կատարվում ուսուցումը:

Այս փուլում երեխաները սովորում են կապակցված ձևով վերարտադրել «Այբբենարան»-ում տրված թեմատիկ նկարների բովանդակությունը, խոսքը բաժանել բաղադրիչների: Սովորում են շարժական տառերով բառեր կազմել ու դրանք վանկերի բաժանել, կազմել դրանց գծային մոդելները: Այս փուլի վերջում աշխատանք է տարվում բառակապակցությունների ու 2—4 բառերից կազմված նախադասությունների, 2—3 նախադասություններից կազմված պարզ բնագրերի ընթերցման շուրջ:

Երկրորդ փուլում անցնում ենք համեմատաբար ավելի դժվար արտասանություն ու գրություն ունեցող ու ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը (ը, է, (ե), օ, (ո), վ, հ, յ, զ, ռ, ղ, ժ, խ, բ, գ, դ): Հետագայում հնչյուն-տառերի այս շարքում որոշ փոփոխություններ կատարվեցին՝ նման հնչյունները միասին անցնելու կապակցությամբ ղ-ն մոտեցավ խ-ին և կազմեց մեկ զույգ, փ-ն մոտեցավ բ-ին, գ-ն՝ ք-ին և դ-ն՝ թ-ին՝ համապատասխան զույգեր ստեղծելով:

Ընթերցման համար առաջադրվող նյութերը անհամեմատ ավելի բարդացվում են. տրվում են 4—5 նախադասություններից բաղկացած բնագրեր: Բարդանում է նաև գրելու աշխատանքը. գրում են նոր տառը պարունակող բառեր, բառակապակցություններ ու նախադասություններ՝ ինչպես արտագրությամբ, այնպես էլ թելադրությամբ, սովորում են մեծատառի գործածությունը նախադասության սկզբում և վերջակետից հետո, որոնց մասին ամեն անգամ գրելիս ուսուցիչը պետք է հիշեցնի: Այս փուլում տրվում են նաև տպագիր նյութը ձեռագիր վերածելու առաջադրանքներ, որոնք երեխաները կարողանում են հաղթահարել:

Գրելու աշխատանքներին զուգընթաց սովորում են նաև վայելչագրական և ուղղագրական մի շարք կանոններ՝ բառերը գրել միմյանցից ու տառի չափ հեռավորությամբ, նոր գրելիս սկսել մի քիչ խորքից. մարդկանց անուններն սկսել մեծատառով և այլն: Թելադրությամբ բառեր ու բառակապակցություններ գրել տալու համար նախապես դրանք վերլուծության պետք է ենթարկել, որպեսզի երեխաները չդժվարանան, որպեսզի գրելիքի կայուն մտապատկեր ստեղծվի:

Երրորդ փուլում անցնում ենք արտասանության ու գրության տեսակետից բարդ և խոսքի մեջ համեմատաբար ավելի քիչ գործածական հնչյուններն ու տառերը՝ հետագայում կատարված մասնակի փոփոխություններով հանդերձ (ե, ո, և, թ, չ, ծ, ց, փ, ջ, ք, ճ, ֆ, ձ): Այս փուլի ամենամեծ դժվարությունը, անշուշտ, երկհնչյուն և եռահնչյուն (ե, ո, և) տառերի երևան գալն է, որը միանգամայն նորություն է երեխաների համար, և նրանք պետք է կարողանան հիմնավորապես յուրացնել մեր այբուբենի նաև այդ առանձնահատկությանը:

Կարդալու համար առաջադրվում են տարբեր վանկային կառուցվածք ունեցող բառեր՝ հաճախ նաև բաղաձայնական կուտակումներով (սունկ, տունկ, տաշտ, դաշտ,

սանր), կապակցված ամբողջական նյութեր՝ 4—5 բառից կազմված նախադասություններով, շաղկապներով և անշաղկապ բարդ նախադասություններ և այլն:

Գրելու աշխատանքին զուգընթաց էլ ավելի են կատարելագործվում ու խորացվում գրելու տեխնիկայի մշակմանը վերաբերող վարժությունները, երեխաները սովորում են ուսուցչի թելադրությամբ գրել օժանդակ բայերն ու շաղկապները: Այժմ այբբենարաններում այլևս ձեռագիր օրինակներ չեն տրվում, ստեղծվել են գրավոր աշխատանքի հատուկ տետրեր, որոնցում մեթոդական որոշակի համակարգով տրված են գրելու վարժությունները՝ նյութը և մեթոդական նպատակահարմար ձևը:

«Այբբենարան»-ում տրված յուրաքանչյուր նկար, փոքրիկ նյութ և նույնիսկ առանձին նախադասություն, բառակապակցություն, բառ ու նկար նյութ պետք է ծառայեն երեխաների աշխարհաճանաչողության սահմանների ընդարձակման ու դաստիարակության համար: Գրաճանաչության ուսուցումն ամենից առաջ դիտվում է որպես երեխաների մտավոր զարգացման, գիտելիքների պաշարի հարստացման, կարողությունների մշակման ու կատարելագործման իմաստալից ու նպատակաուղղված գործողություն: Յուրաքանչյուր նյութ, բառ և բառակապակցություն պետք է առաջին դասարանցու մտածողության մեջ կամաց-կամաց ձևավորի ազգային և համամարդկային արժեքներ, կարևորի հայկական ամեն ինչը, գնահատվի ընտանիքի, հայրենիքի, մարդ-բնություն կապի կարևորությունը:

Ստորև ներկայացնենք մի քանի հնչյուն-տառերի ուսուցման ժամանակ ներկայացվող թեմաներ,որոնք ձևավորում են ազգային արժեքներ:

Ա հնչյուն-տառի ուսուցման ժամանակ Արարատի նկարն է,որի փոքր գագաթի անունը Սիս է, մեծինը՝Մասիս:Աշակերտներին ներկայացվում է,որ Մասիսը ամենաբարձր սարն է աշխարհում,հաշված իր ստորոտից մինչև գագաթ:Թռուցիկ կարելի է ասել,որ Մեծ Մասիսի վրա իջել է Նոյյան տապանը:

Մ հնչյուն-տառի ուսուցման ժամանակ նախապատրաստական զրույց է անցկացվում Մատենադարանի մասին:Աշակերտներին հիշեցնում ենք անցած դասի զրույցը տպարանի և գրքերի տպագրության մասին,ինչպես էին գրքերը ստեղծվում հին ժամանակներում,երբ չկային տպագրական մեքենաներ:Այնուհետև բացատրվում է,որ ձեռքով էին գրում գրքերը՝ կենդանիների կաշվի վրա:Հայերը շատ գրքեր են ստեղծել,բայց թշնամիները դրանց մի մասը ոչնչացրել են:Փրկված գրքերը պահվում են Մատենադարանում,որը հին ձեռագրերի պահոց է,նաև՝ գրադարան:Ներկայացվում է նաև <<Մշո ճառընտիր>>նշանավոր ձեռագրի մասին,թե ինչպես թշնամուց փախչելիս,երկու հայ կին,թողնելով գանձերը,ճանապարհի պաշարը,երկու կես են անում հսկա ձեռագիրը և շալակած,սարերով հասցնում էջմիածին:Հիմա այդ գիրքը պահվում է Մատենադարանում:Այդ գիրքը գրելու համար օգտագործել են 600 հորթի կաշի:Մատենադարանի մուտքի մոտ Մեսրոպ Մաշտոցի՝ Հայոց գրերն ստեղծողի արձանն է:

Գլուխ 2: Ազգային և համամարդկային արժեքների ձևավորումը գրաճանաչության գործընթացում

«Այբբենարան»-ում տրված նկարների, առանձին բառերի, բառակապակցությունների, նախադասությունների ու կապակցված նյութերի, դրանց շուրջ անցկացվող զրույցների, բացատրությունների, էքսկուրսիաների, առարկայական դասերի, բնության դիտումների, ուսուցման տեխնիկական միջոցների, զննական նյութերի և այլ միջոցներով երեխաներին տարրական տեղեկություններ ենք տալիս շրջապատի աշխարհի, մարդկանց աշխատանքի և այլ հարցերի վերաբերյալ:

Աշխարհաճանաչողական տեղեկությունների հաղորդումը սերտորեն կապված է երեխաների խոսքի ու մտածողության զարգացման հետ: Այդ բնույթի նյութերը հիմնականում վերաբերում են երեխայի շրջապատին՝ մարդկանց, կենդանիներին ու բույսերին, քաղաքի ու գյուղի կյանքին, արդյունաբերությանն ու գյուղատնտեսությանը, ընտանիքին, դպրոցին, խաղերին և ուսումնական պարապմունքներին: Այս բոլորն էլ

երեխաներին խորապես հարազատ, ծանոթ ու հետաքրքրող թեմաներ են, ուստի գրեթե միշտ աշխարհաճանաչողական տեղեկությունների հաղորդումը կարելի է սկսել ակտիվ երկկողմյան զրույցով՝ երեխաների իմացածը թարմացնելու, անհատական դիտումների շնորհիվ ձեռք բերվածը գիտակցել տալու աշխատանքից և ապա անցնել նոր տեղեկությունների հաղորդմանը: Այսպիսով, իմացածի և նոր ձեռք բերածի միջև որոշակի կապ է ստեղծվում, առարկան կամ երևույթն ընկալվում է մի քանի առանձնահատկություններով և ճանաչումն ավելի ամբողջական ու կատարյալ է դառնում:

Դասագրքում կան նաև բոլորովին նոր, առօրյա կյանքից երեխաներին անծանոթ նյութեր: Դրանց մասին առաջին ծանոթությունն ուսուցիչը պետք է տա, որից հետո նոր կարելի կլինի անցնել համապատասխան նկարի կամ նյութի ուսումնասիրությանը: Այդ տեղեկությունները կարող են լինել աշխարհագրական, բնագիտական, պատմական և այլ կարգի աշխարհաճանաչողական նյութեր, որոնք նպաստում են երեխայի մտավոր զարգացմանը, նրան նախապատրաստում բացատրական ընթերցանությանն անցնելու համար:

Աշխարհաճանաչողական տեղեկություններ կարող ենք տալ ընտանիքի ու ընտանեկան հարաբերությունների, մանկական խաղերի ու խաղալիքների, դասի ու դպրոցի, կենդանիների ու թռչունների, աշխատանքի ու աշխատանքային գործիքների, քաղաքի ու քաղաքային կյանքի, տեխնիկայի ու տրանսպորտի ձևերի, անտառի ու նրա բնակիչների, սպորտի, պատմական կարևորագույն անցքերի վերաբերյալ, որոնք կարևոր նշանակություն ունեն երեխայի մտավոր զարգացման համար: Այս հարցերի վրա ուսուցիչն ամեն օր պետք է ուշադրություն դարձնի, դրանք պետք է կազմեն ուսումնական աշխատանքի բովանդակությունը:

Ուսուցումը պետք է նաև դաստիարակող լինի, և այդ կարևոր սկզբունքը հետևողականորեն պետք է պահպանվի ամբողջ գրաճանաչության ընթացքում: «Այբբենարան»-ը շատ մեծ հնարավորություններ է ստեղծում այս առումով. առաջին էջից մինչև վերջինը նյութ է տալիս դաստիարակչական աշխատանքների համար սկսած դասարանական առողջ ու կենսունակ կոլեկտիվի ստեղծումից, մինչև բարոյական, գաղափարական ու գեղագիտական դաստիարակությունը: Այստեղ յուրաքանչյուր նկար, բառակապակցություն, նախադասություն ու փոքրիկ նյութ

կարող է այդպիսի աշխատանք տանելու առիթ տալ կամ պայմաններ ստեղծել, եթե ուսուցիչը լավ գիտի իր գործը:

Դաստիարակչական աշխատանքների համար հիմնական թեմաներ կարող են լինել ընտանիքը, մեծերի ու փոքրերի փոխադարձ ջերմ վերաբերմունքը միմյանց նկատմամբ, ընկերությունը, կոլեկտիվիզմը, համերաշխությունը, աշխատանքը որպես երջանկության ու բարիքների աղբյուր, աշխատասիրությունը որպես մարդկային բարձր հատկանիշ, կարգապահությունն ու ազնվությունը, ճշտապահությունը, հայրենասիրությունը, սերն ու հոգատարությունը բնության՝ բույսերի ու կենդանիների նկատմամբ, սերը գեղեցիկի ու բարու նկատմամբ, հումորի զգացումը և այլն:

Ահա մոտավորապես հարցերի այն շրջանակը, որի շուրջ կարելի է դաստիրակչական աշխատանք տանել գրաճանաչության ուսուցման ընթերցում՝ հետևողականորեն նպաստելով երեխաների բարոյական կերպարի ձևավորումը, նրանց համակողմանի դաստիրակությունը:

Եզրակացություն

Նոր սերնդի արժեհամակարգի ձևավորման, կրթության և դաստիարակության գործում լուրջ անելիքներ ունի հայ դպրոցը, որի գերնպատակն է կերտել բարոյական, ազգային արժեքներով օժտված, ազգային նկարագիր ունեցող սերունդ: Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել ու կատարելագործել ոչ միայն հայրենի և համաշխարհային գիտությունների ճյուղերը, այլև մանկավարժության անցյալի ժառանգությունն ու նրա ժամանակակից փորձն ու մեթոդաբանությունը:

Պատահական չէ արևմտահայ մանկավարժ Նիկողայոս Զորայանի մտահոգությունը, թե «ինչու համար դաստիարակութիւնը չի յաջողիլ ազգին մէջ, կամ ինչ ընելու է, որ ազգային դպրոցներն առաջ երթան»[2]: Եվ ինքն էլ պատասխանում է իր հարցադրմանը՝ առաջարկելով վերակառուցել դպրոցը՝ մոտեցնելով այն ազգային ակունքներին, բարձրացնելով հասարակության կենսամակարդակը և դպրոցները համալրելով մասնագիտական բարձր ունակություններ ունեցող մանկավարժ-դաստիարակներով: Հետևապես, ժամանակակից դպրոցի կարևորագույն առաքելություններից մեկն էլ երեխայի մեջ իր ազգին բնորոշ բարոյական և հոգևոր արժեքների ձևավորումն ու զարգացումն է: Նրա խնդիրն է պահպանել և փոխանցել այն արժեքները, որոնք ժառանգել ենք մեր նախնիներից, և որը մեր անխառն ինքնատիպությունն է համաշխարհային մշակույթի բազմերանգության ու բազմազանության մեջ: Այս խնդրում որպես գործիքակազմ մեծ դերակատարություն ունի ժողովրդական բանահյուսությունը՝ իր ժանրային բազմազանությամբ, որը կարող է երիտասարդ սերնդի ազգային ինքնության, բարոյական դաստիարակության գործընթացը դարձնել առավել արդյունավետ՝ հաշվի առնելով նրա ունեցած բարոյադաստիարակչական մեծագույն արժեքը: Ուստի 21-րդ դարի դպրոցում դաստիարա կության և կրթական գործընթացի ճիշտ կազմակերպման համար շատ կարևոր են ոչ միայն համամարդկային, այլև հայրենի մշակույթի բարձրարժեք ստեղծագործությունների ուսումնասիրումն ու ուսուցումը: Այդ

[2] Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002, էջ 65:

ստեղծագործություններում արտահայտված են մեր ժողովրդի հոգեկերտվածքը, աշխարհընկալումը, մարդասիրական գաղափարներն ու գալիքի երազանքները:

Հայ ժողովրդի ավանդույթներում է, որ վառ կերպով արտացոլված են մեր ազգի ազգային հավաքական բնույթը, անդրդվելի կամքը, ներքին զորությունն ու հնարավորությունները, ապրելու, վերածնվելու և հարատևելու ունակությունը, ազգերի պատմության մեջ իր արժանի տեղն ունենալու ձգտումը: Այս ամենն է, որ անհրաժեշտ է ավանդել ժամանակակից էթնոկրին: Այդպես նա պիտի հասնի այն գիտակցության, որ հասարակական կյանքի առաջընթացը պայմանավորված է համախմբվածությամբ, գիտելիքների բարձր մակարդակով ու մշակութային արժեքների ոչ միայն ստեղծմամբ, այլև պահպանմամբ: Սերունդ, որը կկարողանա շարունակել ազգային լավագույն ավանդույթները, աշխարհին ու մարդկությանը ցույց տալ իր մշակութային հարստությունն ու բարոյահոգեբանական արժանիքները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Գևորգյան, Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Եր., 2002
2. Ա. Տեր-Գրիգորյան. Գրավոր աշխատանքները տարրական դասարաններում. Երևան, 1961.
3. Ա. Տեր-Գրիգորյան. Հայոց լեզվի մեթոդիկա. Երևան, 1980.
4. Հայ մանկավարժներ. Գիրք Բ. Երևան,
5. Ա. Բահաթրյան. Մայրենի լեզվի ուսուցումը տարրական դպրոցների մեջ. Երևան, 1878.
6. Ա. Տեր-Գրիգորյան. Աշխատանք այբբենարանով. Երևան, 1979.
7. Ա. Տեր-Գրիգորյան, Ա. Վարդանյան. Այբբենարան. Երևան, 1970-80.
8. И. К. Кучмаева, Культурное наследие. Современные проблемы, М., 1987
9. Գյուլամիրյան Ձ.Հ. Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015 թ.
10. Սարգսյան Վ. Ա. Այբբենարան, մեթոդական ձեռնարկ